ՀԱՍՏԱՏՈՒՄ Է՝
ԵՊՀ պրոռեկտոր
Է. Վ. Ասրիյան

01.11.2021թ.

# ԿԱՐԾԻՔ

## ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Ֆաթեմի Սեյեդեհնասիմ Սայեդմոջթաբայի «Նոր բողոքականության տարածումը Հայաստանի եզդիների շրջանում և ինքնության տրանսֆորմացիաները» Է.00.04. - «Ազգագրություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

ԵՊՀ Պատմության ֆակուլտետի Հնագիտության և ազգագրության ամբիոնի հոկտեմբերի 29-ի նիստում քննարկվեց Ֆաթեմի Սեյեդեհնասիմ Սայեդմոջթաբայի «Նոր բողոքականության տարածումը Հայաստանի եզդիների շրջանում և ինքնության տրանսֆորմացիաները» աշխատանքը՝ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ:

Նիստին մասնակցում էին Հնագիտության և ազգագրության ամբիոնի վարիչ, պ.գ.դ., պրոֆեսոր Հ. Ավետիսյանը, պ.գ.դ., պրոֆեսոր Ռ. Նահապետյանը, պ.գ.թ., դոցենտ Մ. Գաբրիելյանը, պ.գ.թ., դոցենտ Ա. Գնունին, պ.գ.թ., դոցենտ Հ. Հարությունյանը:

Ելույթ ունեցան Հ. Ավետիսյանը, Մ. Գաբրիելյանը և Հ. Հարությունյանը: Նիստի մասնակիցները արձանագրում են հետևյալը.

Վերջին տասնամյակներում Հայաստանում ազգային փոքրամասնությունների՝ մասնավորապես եզդիների վերաբերյալ գիտական հետազոտությունները դարձել են արդիական: Այս խնդիրներին են վերաբերում Ֆաթեմի Սեյեդեհնասիմ Սայեդմոջթաբայի «Նոր բողոքականության տարածումը Հայաստանի եզդիների շրջանում և ինքնության տրանսֆորմացիաները» աշխատությունը, որը ինքնատիպ փորձ է եզդիների կրոնական խնդիրների մասին:

Աշխատությունը կազմված է ներածությունից, 4 գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Աշխատանքը հիմնված է եզդիների վերաբերյալ գիտական հրապարակումների և հարուստ դաշտային ազգագրական հետազոտությունների վրա, որոնք կատարվել են Հայաստանում և արտասահմանում ապրող ավանդական ու կրոնափոխ եզդիների հետ հարցազրույցների միջոցավ՝ Հայաստանում կայացած կրոնափոխ եզդիների համաշխարհային համաժողովների շրջանակում:

Սույն աշխատանքում փորձ է արվել ուսումնասիրել եզդիների հոսքը դեպի Եհովայի վկաների և Հիսուսականների կրոնական համայնքներ և նրանց ինտեգրումը նոր կրոններում, ինչպես նաև համեմատականներ անցկացնել այս կրոնական համայնքների միջև:

Հետազոտությունը կատարվել է հստակ մեթոդաբանությամբ: Աշխատանքը ներկայացված է պարզ և հասկանալի լեզվով, կարդացվում է մեծ հետաքրքրությամբ և գրեթե բացակայում են տեխնիկական բնույթի բացթողումները:

Չնայած այս ամենին աշխատանքում կան որոշակի թերություններ.

1. Ատենախոսության մեջ ցանկալի կլիներ մեծ տեղ հատկացնել զուտ ազգագրական դիտարկումներին, որը ավելի կուժեղացներ խնդրո առարկան:
2. Հեղինակը նշում է, որ իրականացրել է չորս հարյուր հարցում: Ցանկալի կլիներ, որ մի կողմից ներկայացվեր ընտրանքը և ընտրանքի սկզբունքները ու չափանիշները, իսկ մյուս կողմից ատենախոսությունում առանձին դիտարկումները ներկայացվեին ըստ սեռատարիքային և սոցիալ-ժողովրդագրական պատկերի, ցույց տալու համար, որ դիտարկվող գործընթացները իրապես տարբեր ազդեցություններ ունեն էթնիկ, կրոնական ինքնության տարբեր դրսևորումների վրա:
3. Հեղինակը ատենախոսությունում բացմիցս օգտագործում է համայնքներ տերմինը: Ընդունում ենք, որ անունների, բանասացների ցանկերի ներկայացումը կարող էր խնդրահարույց լինել: Սակայն համոզված ենք, որ աշխատանքը ավելի կշահեր, եթե արդյունքները վերլուծվեին ա. քաղաք-գյուղ, բ. խոշոր, միջին և մանր քաղաքներ, գ. խոշոր, միջին և փոքր գյուղեր կտրվածքով, հատկապես, որ, ըստ տարբեր հետազոտությունների արդյունքների եզդիական մշակույթի որոշ առանձնահատկությունները թվարկված հարթություններում նույնպես դիտարկելի են:

Նիստի արդյունքում որոշվեց, որ Ֆաթեմի Սեյեդեհնասիմ Սայեդմոջթաբայի թեկնածուական ատենախոսությունը կայացած հետազոտություն է՝ ունի գիտական և կիրառական նշանակություն և լիովին համապատասխանում է ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի պահանջներին, իսկ հեղինակը արժանի է պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ԵՊՀ Հնագիտության և ազգագրության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Հ. Գ. Ավետիսյան

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ.Գ. Ավետիսյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ գիտքարտուղար, պ.գ.թ. Լ.Ս. Հովսեփյան

01.11.2021